



Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը հայաստանյան հասարակական կազմակերպություններին տրամադրում է դրամաշնորհներ՝ Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններ գործարկելու նպատակով

14 հոկտեմբեր 2008

Երևան - Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը (ԱՄՆ ՄԶԳ ՀԳՄԾ) այսօր հայտարարել է երեք հասարակական կազմակերպությունների՝ Երևանում, Շիրակի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններ գործարկելու նպատակով դրամաշնորհներ տրամադրելու մասին: Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնները կտրամադրեն քաղաքացիներին աջակցություն և խորհրդատվություն՝ իրավական ընթացք տալու իրենց կոռուպցիոն բողոքներին և կօգնեն համապատասխան քայլեր ձեռնարկելու բողոքների և կոռուպցիայի հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ՝ ստեղծելով մատչելի հնարավորություն կոռուպցիան արձանագրելու և բողոքները համապատասխան կառավարական հիմնարկներ հղելու համար:

Հինգ կենտրոնները գործող կդառնան նոյեմբերից սկսած, իսկ 2009 թ. սկզբից ևս վեց Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններ կհիմնադրվեն՝ Հայաստանի մնացած վեց մարզերում քաղաքացիներին աջակցություն ցուցաբերելու համար:

Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններ գործարկելու նպատակով դրամաշնորհներ է տրամադրվել հետևյալ հասարակական կազմակերպություններին.

- Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային՝ Տավուշի մարզի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնը Իջևան քաղաքում գործարկելու համար,
- Սյունիքի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնին՝ Սյունիքի մարզի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնը Կապանում գործարկելու համար և
- Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն կազմակերպությանը՝ Լոռու մարզի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնը Վանաձորում,



Շիրակի մարզի Կենտրոնը Գյումրիում, ինչպես նաև Երևանի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնը գործարկելու համար:

«Կոռուպցիայի դեմ պայքարի ջանքերը ոչ միայն կառավարությունից, այլև հասարակական և մասնավոր սեկտորներից պետք է սկզբնավորվեն», - ասել է ԱՄՆ ՄՁԳ/Հայաստան առաքելության տնօրեն Ռոբին Ֆիլիպսը: «Արդյունքների հասնելու համար էական է, որ Հայաստանի կառավարական կառույցները դիտեն Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնները որպես քաղաքացիական հասարակությունը ներկայացնող առանցքային գործընկերներ կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Ես հույս ունեմ, որ Հայաստանի իշխանությունները բոլոր մակարդակներով կաշխատեն Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների հետ՝ կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու ուղղությամբ»:

«Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնները հայաստանցիներին յուրօրինակ հնարավորություն են ընձեռում՝ նախկինում անլուծելի թվացող կոռուպցիային առնչվող խնդիրների լուծման համար».- ասել է Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի ղեկավար Ֆրանսուա Վեզինան: «Կարևոր է, որ մարդիկ հնարավորություն ունենան կոռուպցիայի շղթայածև ցիկլը կտրելու, և Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնները արդյունավետ հնարավորություն են ընձեռում անելու այս բանը», - ավելացրել է պարոն Վեզինան: ԱՄՆ ՄՁԳ ՀԳՄԾ-ն ստեղծել է Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնները և աջակցելու է նրանց գործունեությանը՝ դրամաշնորհների նախատեսված ժամկետների ողջ ընթացքում:

ԱՄՆ ՄՁԳ ՀԳՄԾ-ի մասին

2007 թ. հիմնադրված ԱՄՆ ՄՁԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (երեք տարի տևողությամբ՝ երկու տարվա երկարացման հնարավորությամբ) նպատակն է կոռուպցիայի նվազեցումը՝ հետևյալ միջոցներով՝ 1) Հայաստանի քաղաքացիների համար ստեղծել կոռուպցիայի դրսևորումների դեմ պայքարելու հնարավորություններ, 2) փոխել հասարակական կարծիքը, ինչպես նաև գործելակերպը երիտասարդների և մեծահասակների շրջանում՝ օգնելով նրանց ձևավորել կոռուպցիայի հետևանքների նկատմամբ համապատասխան վերաբերմունք և մեծացնել քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ ընդվզման հավանականությունը, և 3) հնարավորություններ/պայմաններ ստեղծել համակարգային փոփոխությունների համար, որոնք կկանխարգելեն կամ կնվազեցնեն կոռուպցիոն ռիսկերը և դրսևորումները:

Հանդիսանալով համապարփակ հակակոռուպցիոն նախաձեռնություն, որի նպատակն է կոռուպցիայի նվազեցումը թե՛ տեղական, թե՛ համակարգային մակարդակներում՝ ՀԳՄԾ-ն կտրամադրի տեխնիկական աջակցություն Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին՝ ստեղծելով բողոքների արձագանքման մեխանիզմ, որը կնպաստի համակարգային ու ընթացակարգային բարեփոխումների իրականացմանը, մշակելով և իրականացնելով հակակոռուպցիոն նախաձեռնություններ պետական մարմինների հետ, աջակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին կոռուպցիայի դեմ գործողության համախմբմանն ուղղված նորարար մոտեցումների իրականացմանը և բարձրացնելով կոռուպցիայի վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը:



Մամուլի մասնագետ՝ Արա Բրուտյան
Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր
Հեռ՝ +374 10 514 835
Ֆաքս՝ +374 10 514 836
Էլ. փոստ՝ abrutian@casals.com
www.maac.am

Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր
Իրականացվում է «Կասալս Ենդ Ասոշիեյթս» Ինք. կողմից
105/1 Տերյան փողոց, 804 սենյակ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
0009

Հեռ՝ +374 10 514 835
Ֆաքս՝ +374 10 514 836
www.maac.am